# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 55-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Հայաստանի Հանրապետության Տարածքային Զարգացման Հիմնադրամին Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում ներդրումային ծրագիր ներկայացնելու նպատակով ստեղծվող նախաձեռնող խմբի կազմը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի կազմում ավագանու ներկայացուցիչ առաջադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4.Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարի ամսական վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ձախափնյակի 13-րդ շենքի N 16/1 բնակելի տարածքը՝ սենյակը, անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին .

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. «Ջերմուկի Հիդրոտեխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կարիքների համար հողամասի սերվիտուտ սահմանելու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.8. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի հողերի ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.9. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.10. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վճարի գինը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.11 Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վճարի գինը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Բաբայան Կավկազ Զավենի | չ/ մասնակցել | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | չ/ մասնակցել | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | չ/ մասնակցել | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......7....... դեմ-.....0....... ձեռնպահ- 0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համայծայնություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքին Հայաստանի Հանրապետության Տարածքային Զարգացման Հիմնադրամի ներդրումային ծրագրին մասնակցելու համար:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տարածքային Զարգացման Հիմնադրամին Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում ներդրումային ծրագիր ներկայացնելու նպատակով ստեղծվող նախաձեռնող խմբի հետևյալ կազմը՝

1. Վարդան Հովհաննիսյան՝ Ջերմուկ համայնքի ղեկավար
2. Արտուշ Սիմոնյան՝ համայնքի ավագանու անդամ
3. Նարեկ Հովհաննիսյան՝ համայնքի ավագանու անդամ
4. Համիկ Սարգսյան՝ համայնքի ավագանու անդամ
5. Մխիթար Բունիաթյան՝ համայնքի ավագանու անդամ
6. Գոհար Թադևոսյան՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
7. Արմինե Ղազարյան՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ
8. Արամ Սարգսյան՝ Հերհերի համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ
9. Սոս Թովմասյան՝ Կարմրաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
10. Սեդրակ Ասատրյան՝ Ջերմուկի համայնքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ

11.Արամ Հարությունյան՝ Գնդեվազի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

12. Վազգեն Գալստյան՝ «Ջերմուկի զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ

13.Պավլիկ Հարությունյան՝ «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և նարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն

14. Օնիկ Մանուկյան՝ համայնքի բնակիչ

3.Սահմանել, որ նախաձեռնող խումբը պետք է Հայաստանի Հանրապետության Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից առաջարկված չափանիշներին և ժամկետին համապատասխան կազմի և ներկայացնի համայնքում սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրի մասնակցության հայտը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | [signature] | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | [signature] | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | [signature] | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | [signature] | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ........10....... դեմ-.......0...... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 57-Ն

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի և 54.1 հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33.1-ին հոդվածը և 32-րդ հոդվածի 10.2-րդ կետը՝ ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1.Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Ջերմուկի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 26-Ն որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......10...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

*Հավելված*

*Ջերմուկի համայնքի ավագանու*
*2016 թվականի նոյեմբերի 10-ի*
*N 57-Ն որոշման*

# ԿԱՐԳ

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Ջերմուկ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմնի (այսուհետ ԽՄ) ձևավորման, նրա գործունեության և այդ մարմնին անդամակցելու հետ կապված հարաբերությունները և հիմնական պահանջները:
2. Սույն կարգի նպատակն է՝ ձևավորել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության հստակ, արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) միջև:
3. Սույն կարգի խնդիրներն են.
1) հստակեցնել ԽՄ-ի գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները.
2) սահմանել ԽՄ-ի քանակն ու անվանումը.
3) սահմանել ԽՄ-ի ձևավորման, անդամների ընտրության մոտեցումները և գործունեության կարգը.
4) հստակեցնել ԽՄ-ի գործունեությանն առնչվող կողմերի դերերը և գործառույթները.
5) սահմանել այլ մարմինների հետ ԽՄ-ի հարաբերությունները.
6) սահմանել ԽՄ-ի գործունեության դադարեցման, սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման մոտեցումները:

## II. ԽՄ-Ն, ՆՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. ԽՄ-ն համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմին է, որի միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը: ԽՄ-ն, որպես համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միավորված խումբ, կարող է խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:
5. ԽՄ-ի նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը և հասցեականությանը՝ ապահովելով համայնքի

բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

6. ԽՄ-ի խնդիրներն են.

1) խորհրդատվություն տրամադրել համայնքի ղեկավարին համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ.
2) ապահովել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը ՏԻՄ-երին.
3) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ:

7. ԽՄ-ի գործառույթներն են.

1) ապահովել համայնքի բնակիչների իրազեկությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ.
2) աջակցել և մասնակցել համայնքի զարգացման հնգամյա ծրագրի, բյուջեի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացման և վերահսկման, մոնիթորինգի, աուդիտի և գնահատման աշխատանքներին.
3) եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին համայնքին առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ.
4) վերհանել տվյալ ոլորտում հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող խնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
5) ուսումնասիրել և քննարկել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
6) իրականացնել հանրային մշտադիտարկում (մոնիթորինգ) ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ.
7) ապահովել հարթակ, մի կողմից, համայնքի ղեկավարի, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների համար և, մյուս կողմից, համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների միջև կապի և երկխոսության համար.
8) աջակցել համայնքում կոնֆլիկտների կանխարգելմանը, ծագած կոնֆլիկտների լուծմանը, նպաստել համայնքում առկա հակամարտությունների մեղմմանը.
9) հետևել ԽՄ-ի կողմից ընդունված որոշումների հետագա կատարման ընթացքին.
10) համագործակցել համայնքային աշխատանքային խմբերի և այլ մարմինների հետ.
11) առաջադրել «Համայնքի ակտիվ բնակիչ» խրախուսական մրցանակի թեկնածու:

## III. ԽՄ-Ի ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

8. Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում է թվով մեկ ԽՄ, որն է.

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ:

## IV. ԽՄ-Ի ԿԱԶՄԸ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

9. ԽՄ-ի ձևավորումը իրականացվում է հետևյալ կարգով.

1) ԽՄ-ն կարող է ունենալ մինչև 25 անդամ.
2) ԽՄ-ն ձևավորված է համարվում, եթե ԽՄ-ի կազմում ընդգրկված է առնվազն հինգ անդամ.
3) ԽՄ-ն ունի նախագահ և քարտուղար: Նախագահը և քարտուղարը ԽՄ-ի անդամ չեն:

10. ԽՄ-ի կազմում, իրենց համաձայնությամբ, կարող են ներգրավվել.

1) համայնքի ավագանու մեկից երեք անդամ.
2) Համայնքապետարանի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետներ.
3) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
4) մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
5) պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչներ.
6) համայնքում գործող բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների (համատիրությունների, հավատարմագրային կամ լիազորագրային կառավարման մարմինների, կոոպերատիվների և այլնի) և (կամ) համայնքի թաղամասերի և բնակավայրերի ներկայացուցիչներ.
7) փորձագետներ.
8) համայնքի ակտիվ բնակիչներ.
9) այլ շահագրգիռ անձիք:

11. Յուրաքանչյուր կազմակերպությունից կամ խմբերից կարող է ներգրավվել մեկ անդամ:

12. ԽՄ-ն ձևավորվում է սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:

13. ԽՄ-ն գործում է մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

14. Նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո երկու ամսվա ընթացքում ձևավորվում է նոր կազմով ԽՄ:

15. ԽՄ-ի անդամ չեն կարող լինել.

1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
2) հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրումեն քրեակատարողական հիմնարկներում.
3) զինված ուժերի ժամկետային զինծառայողները:

16. ԽՄ-ի անդամների թեկնածուների ներկայացումը և հաստատումը կատարվում է հետևյալ կարգով.

1) ԽՄ-ի անդամների թեկնածուներին համայնքի ղեկավարի համապատասխան առաջարկության ներկայացմամբ, հաստատում է համայնքի ավագանին՝ համապատասխան որոշմամբ.
2) ԽՄ-ի անդամները ԽՄ-ի կազմում ընդգրկվում են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը.
3) համայնքի նորընտիր ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո նոր կազմով ԽՄ ձևավորելիս՝ ԽՄ-ի նախկին անդամներն իրենց համաձայնությամբ կարող են նորից ներկայացվել և ընդգրկվել ԽՄ-ի կազմում:

17. ԽՄ-ի անդամների թեկնածուների առաջադրումը կատարվում է հետևյալ կարգով.

1) համայնքի ավագանու անդամի թեկնածուին առաջադրում է համայնքի ավագանին՝ իր որոշմամբ (թեկնածուի համաձայնությամբ).
2) համայնքապետարանի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի թեկնածուին առաջադրում է համայնքի ղեկավարը (թեկնածուի համաձայնությամբ).
3) ԽՄ-ի մյուս անդամների թեկնածուներին առաջադրում է ԽՄ-ի անդամների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովը՝ դիմում ներկայացրած անձանց կազմից:

18. ԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքապետարանի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրությունը կատարվում է հրապարակային հայտարարության հիման վրա դիմումներ ներկայացրած անձանց կազմից: Հայտարարությունը տրվում է սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում: Հայտարարությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հազար բնակչի համար: Համայնքի պաշտոնական ինտերնետային (համացանցային) կայքի առկայության դեպքում հայտարարությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն): Հայտարարության մեջ նշվում է, թե ովքեր, ինչպես և ինչ ժամկետներում կարող են դիմել: Դիմումի ձևը սահմանված է հավելված 1-ում:

19. ԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքապետարանի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով հանձնաժողովի կողմից անց է կացվում հարցազրույց: Հանձնաժողովը նախագահում է համայնքի ղեկավարը: Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը կարող է ունենալ երեք անդամ՝ ներառյալ նախագահը:

20. ԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի և համայնքապետարանի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների մասնագետի) թեկնածուների ընտրության ժամանակ կարող են հաշվի առնվել հետևյալ չափանիշները.

1) թեկնածուի կրթական ցենզը.
2) համայնքի բնակչության տարբեր խմբեր ներկայացնող անձանց (կանայք, երիտասարդներ, խոցելի խմբեր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածիկազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն) ներկայացուցչության ապահովումը.
3) հասարակական կարգով աշխատանքներ կատարելու նախկին փորձը.
4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովումը.
5) հարցազրույցի արդյունքները:

21. Դիմում ներկայացրած այն անձինք, ովքեր չեն ընդգրկվել ԽՄ-ի կազմում, գրանցվում են դիմում ներկայացրած անձանց ռեզերվում:

22. ԽՄ-ի անդամների գործունեությունը այն իրականացնելու ընթացքում հնարավոր է դադարեցվի:
23. ԽՄ-ի անդամի գործունեությունը դադարեցվում է համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, համայնքի ավագանու որոշմամբ, եթե ԽՄ-ի անդամը.
1) դիմում է ներկայացրել ԽՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ.
2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
3) առկա է նրա նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ և նա իր պատիժը կրում է քրեակատարողական հիմնարկում.
4) զորակոչվել է ժամկետային զինծառայության.
5) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել ԽՄ-ի նիստերի աշխատանքին.
6) մահացել է:
24. Եթե ԽՄ-ի անդամի գործունեության դադարեցման հետևանքով ԽՄ-ի անդամների թիվը նվազել է հինգից, ապա ԽՄ-ի նոր անդամի թեկնածուն առաջադրվում է դիմում ներկայացրած անձանց ռեզերվից կամ, եթե դա հնարավոր չէ, ապա 15 օրվա ընթացքում նոր տրված հայտարարության հիման վրա դիմում ներկայացրած անձանց կազմից:
25. Համայնքի ղեկավարը ավագանու առաջիկա նիստին առաջարկություն է ներկայացնում ԽՄ-ի նոր անդամի թեկնածությունը հաստատելու վերաբերյալ:
26. Եթե ԽՄ-ի անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքապետարանի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչը դադարեցնում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել ԽՄ-ին:
27. ԽՄ-ի նախագահը համայնքի ղեկավարն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, ԽՄ-ի նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:
28. ԽՄ-ի քարտուղարը համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարն է կամ նրա կողմից նշանակված համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչը:

## V. ԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

29. ԽՄ-ի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձամբ, հասարակական հիմունքներով:
30. ԽՄ-ի գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը կազմակերպում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում, աշխատակազմի բաժինների և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ներգրավմամբ և մասնակցությամբ:
31. Համայնքի ղեկավարը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում (նիստերի սենյակ, աշխատասենյակ, համակարգիչ, գրասենյակային պարագաներ և այլն) ԽՄ-ի՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման և նիստերի կազմակերպման ու անցկացման համար, ինչպես նաև ԽՄ-ի գործունեությանը հաշմանդամների, սակավաշարժ խմբերի, կարդալու և լսելու դժվարություններ ունեցող անձանց մասնակցությունն ապահովելու համար:
32. ԽՄ-ի նիստերը գումարվում են՝
1) առնվազն երեք ամիսը մեկ անգամ.
2) անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:
33. Նիստերը հրավիրում և վարում է ԽՄ-ի նախագահը:
34. ԽՄ-ի նիստի ամսաթիվը որոշում է ԽՄ-ի նախագահը:

35. ԽՄ-ի առաջին նիստը գումարվում է ԽՄ-ի կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում:
36. ԽՄ-ի նիստերը կազմակերպվում և անց են կացվում ՏԻՄ-երի նստավայրում կամ համայնքի ղեկավարի որոշմամբ մեկ այլ վայրում:
37. ԽՄ-ի նիստի վայրը, ամսաթիվը և քննարկման ենթակա հարցերի օրակարգը հրապարակվում են նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Նշյալ տեղեկատվությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հազար բնակչի համար:
38. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայության դեպքում, վերոնշյալ տեղեկատվությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն):
39. ԽՄ-ի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ԽՄ-ի անդամների թվի կեսից ավելին:
40. Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում տվյալ նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում ԽՄ-ի նախագահը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ԽՄ-ի՝ նիստին ներկայացած անդամները:
41. ԽՄ-ի նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:
42. ԽՄ-ի նիստերը դռնբաց են: ԽՄ-ի նիստին կարող են հրավիրվել տվյալ նիստի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերին առնչվող անձիք, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:
43. ԽՄ-ի անդամը ԽՄ-ի նախագահի կողմից կարող է հեռացվել ԽՄ-ի նիստից՝ նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում:
44. ԽՄ-ի նիստի օրակարգը սահմանվում և իրականացվում է հետյալ կարգով.
1) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը.
2) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է ԽՄ-ի քարտուղարին նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Հարցեր կարող են ներկայացնել նաև ԽՄ-ի բոլոր անդամները.
3) ԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը, քննարկվող հարցերի վերաբերյալ կից փաստաթղթերը ԽՄ-ի քարտուղարը ներկայացնում է ԽՄ-ի անդամներին նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:
45. ԽՄ-ի նիստի օրակարգի նախագծում նշվում են.
1) նիստի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը.
2) քննարկման ենթակա հարցերը.
3) քննարկվող յուրաքանչյուր հարցի զեկուցողի անունը և ազգանունը:
46. ԽՄ-ի նիստն սկսվում է ԽՄ-ի նիստի օրակարգի հաստատումով՝ ԽՄ-ի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:
47. ԽՄ-ն կազմում և ընդունում է որոշումներ:
48. ԽՄ-ի որոշումներն ընդունվում են ԽՄ-ի եզրակացությունների և (կամ) առաջարկությունների ձևով, որոնք ներկայացվում են համայնքի ղեկավարին:
49. ԽՄ-ի որոշումը համայնքի ղեկավարի համար կրում են խորհրդատվական բնույթ: ԽՄ-ի որոշումների հիման վրա համայնքի ղեկավարը կարող է ընդունել համապատասխան որոշումներ:

50. ԽՄ-ի որոշումն ընդունվում է տվյալ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ հավասար ձայների առկայության դեպքում վճռորոշ է ԽՄ-ի տարեց անդամի ձայնը:
51. ԽՄ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:
52. ԽՄ-ի նախագահը ունի խորհրդակցական ձայնի իրավունք:
53. ԽՄ-ի որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ԽՄ-ի անդամների անունները և ազգանունները:
54. ԽՄ-ի որոշումը ստորագրում են ԽՄ-ի նիստին ներկա անդամները:
55. ԽՄ-ի նիստերի ընթացքում կազմվում են արձանագրություններ:.
56. ԽՄ-ի նիստերն արձանագրվում են ԽՄ-ի քարտուղարի կողմից:
57. Նիստի արձանագրությունը ներառում է.
1) նիստի անցկացման վայրը և ամսաթիվը.
2) նիստին մասնակցած ԽՄ-ի անդամների, հրավիրված անձանց անունները և ազգանունները.
3) նիստի օրակարգը.
4) քննարկված հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.
5) ընդունված որոշումները, դրանց ներկայացման և հրապարակման ձևերը.
6) ընդունված որոշումներին դեմ քվեարկածների հատուկ կարծիքները(եթե այդպիսիք կան):
58. Նիստի արձանագրությանը կցվում են ԽՄ-ի քննարկմանը դրված նյութերը, ուսումնասիրությունները, լուսանկարները, տեսանյութերը և այլն:
59. ԽՄ-ի նիստերի արձանագրությունները ստորագրում է ԽՄ-ի քարտուղարը: ԽՄ-ի նիստերի արձանագրությունները ենթակա են հրապարակման:

## VI. ԽՄ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

60. ԽՄ-ն մշտական կապ է հաստատում և համագործակցում է համայնքի տարածքում գործող այլ մարմինների՝ համայնքի ավագանու հանձնաժողովների, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչների և շահագրգիռ այլ անձանց հետ:
61. ԽՄ-ն ուղղակի կապ է հաստատում համայնքային աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ՀԱԽ-եր) հետ, որոնք կարող են ձևավորվել ըստ համայնքի ղեկավարի՝ օրենքով սահմանված գործունեության բնագավառների (ոլորտների) կամ դրանց խմբերի, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի կամ ըստ համայնքի առանձին թաղամասերի: ԽՄ-ի անդամները կարող են նախաձեռնել նման ՀԱԽ-երի ձևավորումը: ՀԱԽ-երի ձևավորումը համայնքի բնակիչների կողմից նախաձեռնվելու դեպքում նրանք կարող են այդ մասին տեղեկացնել ԽՄ-ին: ՀԱԽ-ի անդամների կազմը համաձայնեցվում է համայնքի ղեկավարի և ԽՄ-ի հետ: ՀԱԽ-երն իրենց կողմից կատարված աշխատանքների արդյունքները համայնքի ղեկավարին ներկայացնելուց բացի, ներկայացնում են նաև ԽՄ-ին: ԽՄ-ն մեթոդական օգնություն, խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն են տրամադրում ՀԱԽ-երին՝ նրանց աշխատանքները նպատակային և արդյունավետ իրականացնելու համար:

## VII. ԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

62. Համայնքում գործող ԽՄ-ի գործունեությունը դադարեցվում է.
1) երբ լրացել է համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը.

2) երբ սույն կարգում փոփոխությունների և (կամ) լրացումների արդյունքում փոխվել են ԽՄ-ի քանակը և (կամ) անվանումը:

## VIII. ԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԴԵՐԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

63. ԽՄ-ի գործունեությանն առնչվող՝ համայնքի ավագանու գործառույթներն են.
1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է սույն կարգը.
2) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում սույն կարգի մեջ կամ դադարեցնում է սույն կարգի գործողությունը.
3) համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, հաստատում է ԽՄ-ի անդամներին.
4) համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, դադարեցնում է ԽՄ-ի անդամների գործունեությունը.
5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ծանոթանում է ԽՄ-ի ուսումնասիրությունների, եզրակացությունների և առաջարկությունների հետ.
6) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ԽՄ-ի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա ընդունում է համապատասխան որոշումներ.
7) կարող է համայնքի ղեկավարից պահանջել տեղեկանքներ համայնքի տարածքում գործող ԽՄ-ի գործունեության վերաբերյալ:
64. ԽՄ-ի գործունեությանն առնչվող՝ համայնքի ղեկավարի գործառույթներն են.
1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ.
2) առաջարկություննէ ներկայացնում համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը.
3) ձևավորում է ԽՄ-ի անդամների ընտրության հանձնաժողով.
4) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն ԽՄ-ի կազմը հաստատելու վերաբերյալ.
5) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն ԽՄ-ի անդամների գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ.
6) կազմակերպում, ղեկավարում և նախագահում է ԽՄ-ի գործունեությունը.
7) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ԽՄ-ի՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման, նիստերի կազմակերպման ու անցկացման համար.
8) հրավիրում և վարում է ԽՄ-ի նիստերը.
9) որոշում է ԽՄ-ի նիստերին հրավիրվող անձանց կազմը.
10) ձևավորում է ԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերը.
11) ծանոթանում է ԽՄ-ի ուսումնասիրություններին, եզրակացություններին և առաջարկություններին.
12) ԽՄ-ի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա նախաձեռնում է անհրաժեշտ գործողություններ, ընդունում է որոշումներ կամ առաջարկություններ է ներկայացնում համայնքի ավագանուն համապատասխան որոշումներ ընդունելու համար.
13) նախաձեռնում է ՀԱԽ-երի ձևավորումը.
14) համաձայնություն է տալիս համայնքի տարածքում ձևավորվող ՀԱԽ-երի կազմի վերաբերյալ:

65. Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ համայնքի ղեկավարին, որպես ԽՄ-ի նախագահի՝ փոխարինում է համայնքի ղեկավարի տեղակալը:

66. ԽՄ-ի գործունեությանն առնչվող՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի գործառույթներն են.

1) կազմակերպում է ԽՄ-ի գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը, աջակցում է ԽՄ-ի գործունեությանը, նիստերի կազմակերպմանը և անցկացմանը.
2) իրականացնում է ԽՄ-ի քարտուղարի գործառույթները անձամբ կամ նշանակում է ԽՄ-ի քարտուղարին:

67. ԽՄ-ի քարտուղարի գործառույթներն են.

1) հարցեր է ընդունում ԽՄ-ի անդամներից ԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
2) ապահովում է ԽՄ-ի կազմակերպչա-տեխնիկական աշխատանքների իրականացումը.
3) ապահովում է ԽՄ-ի անդամների և նիստերին հրավիրված անձանց իրազեկումը նիստերի անցկացման օրվա, ժամի, վայրի և քննարկվող հարցերի մասին.
4) վարում է ԽՄ-ի գործավարությունը.
5) կազմում և ստորագրում է ԽՄ-ի նիստերի արձանագրությունները.
6) ապահովում է ԽՄ-ի գործունեության, ընդունված որոշումների հրապարակայնությունը:

68. ԽՄ-ի անդամների գործառույթներն են.

1) մասնակցում են ԽՄ-ի նիստերին.
2) հարցեր են ներկայացնում ԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
3) ներկայացնում են բանավոր կամ գրավոր կարծիք ԽՄ-ի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ.
4) մասնակցում են ԽՄ-ի որոշումների ընդունման քվեարկությանը.
5) ստորագրում են ԽՄ-ի որոշումները.
6) ծանոթանում են ԽՄ-ի նիստերի արձանագրություններին.
7) կատարում են ԽՄ-ի որոշումներից բխող կամ ԽՄ-ի նախագահի կողմից տրված հանձնարարականներ.
8) նախաձեռնում են ՀԱԽ-երի ձևավորումը:

## IX. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

69. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը:

70. Սույն կարգի մեջ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, գործողության դադարեցումը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:

Հավելված 1

# ԴԻՄՈՒՄ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ

**Անձնական տվյալներ**

........................ ................................ ..........................

................................................

անուն ազգանուն հայրանուն ծննդյան օր, ամիս, տարի

**Ով է առաջադրել Ձեր թեկնածությունը**

☐ Ինքնաառաջադրում ☐

.......................................................................................................

Ձեր թեկնածությունն առաջադրող կազմակերպության կամ խմբի անվանումը

| Սեռ | Հասցե | |
|---|---|---|
| | փաստացի բնակության | հաշվառման |
| ☐ արական ☐ իգական | .......................................... | .................................... ............. |

**Հեռախոս**

| | | |
|---|---|---|
| աշխ: ...................................... | տուն: ...................................... | բջջ: .................................... ...... |

**Էլեկտրոնային հասցե**

...............................................................................................................................

..........

| Դուք համայնքի բնակի՞չ եք | |
|---|---|
| ☐ այո ☐ ոչ | որքան ժամանակ ............................................................ ........... |

| Կրթություն | Ազգություն |
|---|---|
| ☐ բարձրագույն ☐ միջնակարգ ☐ այլ | ............................................................ ........... |

**Մասնագիտություն**

| | |
|---|---|
| 1. ................................................................... | 2. ................................................................... .......... |

**Դուք հանդիսանում եք**

☐ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ խմբերի ներկայացուցիչ

☐ մասնավոր հատվածի կազմակերպությունների կամ խմբերի ներկայացուցիչ

☐ պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչ

☐ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մարմինների և (կամ) համայնքի ________ բնակավայրի և (կամ) ________ թաղամասի ներկայացուցիչ

☐ փորձագետ

☐ ակտիվ բնակիչ

☐ այլ շահագրգիռ անձ

| Նշեք Ձեր ընթացիկ աշխատանքը/զբաղեցրած պաշտոնը |
|---|
| ........................................................................ ......... |

| Նշեք, թե ինչ հասարակական գործունեությամբ եք զբաղվում (օրինակ, որևէ հասարակական կազմակերպության կամ նրա խորհրդի անդամ եք) |
|---|
| ........................................................................ ........................................................................ .................. |

| Արդյո՞ք նախկինում եղել եք համայնքի ավագանու, աշխատակազմի, կամ համայնքային ենթակայության կազմակերպության ներկայացուցիչ, հասարակական կարգով գործող որևէ մարմնի անդամ | |
|---|---|
| ☐ այո ☐ ոչ | նկարագրություն ........................................................................ ......... |

| Անդամակցե՞լ եք արդյոք նախկինում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող որևէ խորհրդակցական մարմնի | | |
|---|---|---|
| ☐ այո ☐ ոչ | որքան ժամանակ ........................................ ........................................ ........................................ | խորհրդակցական մարմնի անվանումը .............................. .............................. .................. |

| Տեղեկացվա՞ծ եք արդյոք համայնքի ղեկավարին կից ձևավորվող խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգին և ի վիճակի՞ եք, արդյոք մասնակցել այդ մարմնի աշխատանքներին | |
|---|---|
| տեղեկացված եք<br>☐ այո ☐ ոչ | կարող եք մասնակցել<br>☐ այո ☐ ոչ |

| Ինչու՞ եք հետաքրքրված խորհրդակցական մարմնին անդամակցելու |
|---|
| ........................................................................ ......... |

| Այլ տեղեկատվություն կամ հաղորդագրություն, որ կցանկանայիք ուղղել համայնքի ղեկավարին |
|---|
| ........................................................................ |

| |
|---|
| ........................................................................................................................................................................ |
| ........................................................................................................................................................................ |
| ................................... |

Դիմող՝ ........................................................................................

(Անուն, ազգանուն, հայրանուն)

«.....» «.......................» «20.... թ. »

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 58-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1 հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 26-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ բաժնի 17-րդ կետի 1-ին ենթակետը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար ձևավորվող՝ Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի կազմում որպես ավագանու ներկայացուցիչներ առաջադրել ...Արմեն...Գրիշայի... ...Գրիգորյանի,...Արտավազդ...Կարապետի...Գևորգյանի ...և...Արտակ...Պավելի...Բաղրամյանի...........................-ի թեկնածությունները (համաձայնությամբ):

2. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Ջերմուկի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի կազմում ավագանու ներկայացուցիչ առաջադրելու մասին» N 28-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .........10..... դեմ-.........0..... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 59-Ա

### ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկել ավագանու երեք անդամներ՝ անհատական հետևյալ կազմով. Հովհաննիսյան Նարեկ, Բունիաթյան Մխիթար, Գրիգորյան Արմեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....10.... դեմ-....0.... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 60-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 26-րդ կետերի և 27-րդ հոդվածի 3-րդ կետի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարի ամսական վարձատրության չափը սահմանել 357 750 դրամ:

2. Հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

3. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված հաստիքացուցակին համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից, բացառությամբ 3-րդ կետի, որն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

5. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» մասի համաձայն ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 12-ի N 5-Ա որոշումը և N 6-Ա որոշման NN 1 և 2 հավելվածները:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .......10... դեմ-.......0.... ձեռնպահ- ..0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

*Հավելված 1*

*Ջերմուկ համայնքի ավագանու 2016թ.*
*նոյեմբերի 10-ի N 60-Ա որոշման*

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

*Աշխատակազմ՝ 11*

***Առանձնացված ստորաբաժանումներ՝***

1.Սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժին -5
2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժին-1

***Կառուցվածքային ստորաբաժանումներ՝***

1.Ֆինանսական բաժին -5
2.Ներքին աուդիտի բաժին-1

***Տեխնիկական սպասարկման անձնակազմ – 6***

***Ընդհամենը՝ թվաքանակ - 29***

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*Հավելված 2*
*Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թ.*
*նոյեմբերի 10-ի N 60-Ա որոշման*

## *ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*

| հ/հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | ընդհանուր աշխատավարձ |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 357750 | 357750 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 291315 | 291315 |
| 3 | Բնակավայրի վարչական ներկայացուցիչ | 4 | 200000 | 800000 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 135000 | 135000 |
| 5 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 135000 | 135000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 8 | 1119065 | 1719065 |
| | *ԱՇԽԱՏԱԿԱԶՄ* | | | |
| 6 | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 291315 | 291315 |
| 7 | Գլխավոր մասնագետ-ճարտարապետ (2.3-1) | 1 | 194670 | 194670 |
| 8 | Առաջատար մասնագետ (3.1-1) | 1 | 141603 | 141603 |
| 9 | Առաջատար մասնագետ (3.1-2) | 1 | 141603 | 141603 |
| 10 | Առաջատար մասնագետ (3.1-3) | 1 | 141603 | 141603 |
| 11 | Առաջատար մասնագետ (3.1-4) | 1 | 141603 | 141603 |
| 12 | Առաջատար մասնագետ- սոցաշխատող (3.1-5) | 1 | 141603 | 141603 |
| 13 | 2-րդ կարգի մասնագետ (3.3-1) | 1 | 106548 | 106548 |
| 14 | 2-րդ կարգի մասնագետ (3.3-2) | 1 | 106548 | 106548 |
| 15 | 2-րդ կարգի մասնագետ (3.3-3) | 1 | 106548 | 106548 |
| 16 | 2-րդ կարգի մասնագետ (3.3-4) | 1 | 106548 | 106548 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 11 | 1620192 | 1620192 |
| | *ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ* | | | |
| 17 | Բաժնի պետ (2.1-1) | 1 | 264623 | 264623 |
| 18 | Առաջատար մասնագետ (3.1-6) | 1 | 141603 | 141603 |
| 19 | Առաջատար մասնագետ (3.1-7) | 1 | 141603 | 141603 |
| 20 | Առաջատար մասնագետ (3.1-8) | 1 | 141603 | 141603 |
| 21 | Առաջատար մասնագետ (3.1-9) | 1 | 141603 | 141603 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 5 | 831035 | 831035 |
| | *ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ* | | | |
| 22 | Բաժնի պետ (2.1-2) | 1 | 264623 | 264623 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1 | 264623 | 264623 |
| | *ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ* | | | |
| 23 | Բաժնի պետ (1.3-1) | 1 | 264623 | 264623 |
| 24 | Գլխավոր մասնագետ (2.3-5) | 1 | 189885 | 189885 |
| 25 | Առաջատար մասնագետ (3.1-10) | 1 | 141603 | 141603 |
| 26 | Առաջատար մասնագետ (3.1-11) | 1 | 141603 | 141603 |
| 27 | 2-րդ կարգի մասնագետ (3.3-5) | 1 | 106548 | 106548 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 5 | 844262 | 844262 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ | | | | |
| 28 | Բաժնի պետ (1.3-2) | 1 | 264623 | 264623 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1 | 264623 | 264623 |
| ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | |
| 29 | Համակարգչային սարքեր սպասարկող | 1 | 141603 | 141603 |
| 30 | Տեղեկատվական համակարգի օպերատոր | 1 | 120000 | 120000 |
| 31 | Հավաքարար | 3 | 85904 | 257712 |
| 32 | Վարորդ | 1 | 100000 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 6 | 447507 | 619315 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐԸ | | 37 | 5391307 | 6163115 |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 61-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՁԱԽԱՓՆՅԱԿԻ 13-ՐԴ ՇԵՆՔԻ N 16/1 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ՝ ՍԵՆՅԱԿԸ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով, որ Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ձախափնյակի 13-րդ շենքի N 16/1 բնակելի տարածքը՝ սենյակը, մակերեսը՝ 12,4 քմ, ՀԽՍՀ Ազիզբեկովի շրջանի ժողդատարանի վճռով 1989 թվականից ի վեր օգտագործող և տիրապետող Իսրուշ Բաբախանյանը մահացել է, անհատույց սեփականության իրավունքով այդ սենյակը տրամադրել դրան կից բնակարանի սեփականատերեր Արփիկ, Նունե, Համլետ և Գարիկ Բաբախանյաններին՝ համասեփականատիրության իրավունքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...10..... դեմ-.......0... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 62-Ա

### «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԻԴՐՈՏԵԽ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՐՎԻՏՈՒՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետին, 5-րդ կետի 2-րդ պարբերությանը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համաձայնվել «Ջերմուկի Հիդրոտեխ» ՍՊ ընկերության կարիքների համար 8033 քմ հողամասի մշտական սերվիտուտ սահմանելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի օգտագործման համար սահմանել վճար՝ ամսական 30 000 (երեսուն հազար) դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | [signature] | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | [signature] | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......9...... դեմ-......1...... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 63-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հավանություն տալ Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. պետական սեփականություն համարվող Հերհեր համայնքի Բազմաղբյուրի թիվ 1 հասցեում գտնվող 0172-0011 ծածկագրով 15482,6 քմ ջրային նշանակության հողամասը (Բազմաղբյուր Վայք կապտաժների տարածք) փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| [illegible] | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | *[signature]* | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | *[signature]* | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | *[signature]* | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | *[signature]* | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | *[signature]* | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...10...... դեմ-.......0.... ձեռնպահ- ...0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *[signature]* Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 64-Ա

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հավանություն տալ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ կից աղյուսակում ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողամասերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակությամբ.

| հ/հ | Հողամասի ծածկագիրը | Հողամասի մակերեսը | Սեփականության վկայականի համարը | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Փոփոխման արդյունքում | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը |
| 1 | 10-016-0222-0027 | 1,1616 | 28092016-10-0008 | Գյուղատնտեսական | Հնդավոր | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | Արդյունաբերական օբյեկտների |
| 2 | 10-016-0224-0033 | 0,12459 | 18082016-10-0138 | Գյուղատնտեսական | Կորիզավոր | | |
| 3 | 10-016-0226-0046 | 0,14416 | 16082016-10-0009 | Գյուղատնտեսական | Վարելահող | | |
| 4 | 10-016-0226-0022 | 0.3437 | 12072016-10-0004 | Գյուղատնտեսական | Վարելահող | | |
| 5 | 10-016-0224-0071 | 0,3378 | 28102016-10-0003 | Գյուղատնտեսական | Վարելահող | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 65-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2 կետի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 319,80932 հա ընդհանուր մակերեսով արդյունաբերական նպատակային նշանակությամբ հողամասի (91 հողակտորով) կառուցապատման իրավունքը մրցույթով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը: Մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի հողակտորների ցանկը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի մեկնարկային գինը սահմանել 167 000 (հարյուր վաթսունյոթ հազար) դրամ՝ 1 հեկտարի համար, ժամկետը՝ 2034 թվականի հունվարի 1-ը, նպատակը՝ արդյունաբերական օբյեկտներ կառուցելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կարլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-....0.... ձեռնպահ- 0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի
Ջերմուկ

*Հավելված*
*Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թ.*
*նոյեմբերի 10-ի N 65-Ա որոշման*

| հ/հ | Հողամասի ծածկագիրը | Հողամասի մակերեսը (հա) |
|---|---|---|
| 1 | 10-016-0203-0007 | 0.2321 |
| 2 | 10-016-0203-0074 | 2.141755 |
| 3 | 10-016-0203-0075 | 3.381805 |
| 4 | 10-016-0203-0069 | 0.78317 |
| 5 | 10-016-0203-0056 | 0.5403 |
| 6 | 10-016-0203-0064 | 0.0478 |
| 7 | 10-016-0203-0063 | 5.20633 |
| 8 | 10-016-0203-0067 | 9.70218 |
| 9 | 10-016-0203-0065 | 1.4768 |
| 10 | 10-016-0204-0166 | 0.7242 |
| 11 | 10-016-0204-0169 | 1.15 |
| 12 | 10-016-0204-0170 | 0.9759 |
| 13 | 10-016-0204-0203 | 3.1946 |
| 14 | 10-016-0204-0187 | 0.02731 |
| 15 | 10-016-0204-0194 | 72.4036 |
| 16 | 10-016-0204-0190 | 0.10873 |
| 17 | 10-016-0211-0048 | 19.86896 |
| 18 | 10-016-0211-0049 | 0.76161 |
| 19 | 10-016-0211-0045 | 14.57303 |
| 20 | 10-016-0212-0117 | 5.17203 |
| 21 | 10-016-0212-0083 | 1.65574 |
| 22 | 10-016-0212-0084 | 0.10152 |
| 23 | 10-016-0212-0085 | 0.60846 |
| 24 | 10-016-0212-0130 | 13.08485 |
| 25 | 10-016-0212-0122 | 0.01388 |
| 26 | 10-016-0212-0126 | 0.00957 |
| 27 | 10-016-0212-0120 | 0.10935 |
| 28 | 10-016-0212-0128 | 9.62962 |
| 29 | 10-016-0212-0112 | 0.02652 |
| 30 | 10-016-0214-0064 | 0.0167 |
| 31 | 10-016-0214-0065 | 0.3714 |
| 32 | 10-016-0214-0066 | 0.6758 |
| 33 | 10-016-0214-0068 | 0.0294 |
| 34 | 10-016-0214-0069 | 0.0468 |
| 35 | 10-016-0214-0070 | 3.6127 |
| 36 | 10-016-0214-0072 | 2.4578 |
| 37 | 10-016-0214-0079 | 9.2683 |
| 38 | 10-016-0214-0081 | 10 |
| 39 | 10-016-0214-0082 | 5 |

| | | |
|---|---|---|
| 40 | 10-016-0214-0083 | 2.55684 |
| 41 | 10-016-0214-0116 | 1.13987 |
| 42 | 10-016-0214-0112 | 44.74754 |
| 43 | 10-016-0222-0054 | 0.0084 |
| 44 | 10-016-0223-0018 | 0.4905 |
| 45 | 10-016-0223-0030 | 0.02053 |
| 46 | 10-016-0223-0028 | 1.13408 |
| 47 | 10-016-0223-0022 | 4.0093 |
| 48 | 10-016-0223-0023 | 4.6713 |
| 49 | 10-016-0223-0024 | 3.08993 |
| 50 | 10-016-0224-0129 | 15.7924 |
| 51 | 10-016-0224-0101 | 0.3856 |
| 52 | 10-016-0224-0103 | 0.1741 |
| 53 | 10-016-0224-0104 | 0.419 |
| 54 | 10-016-0224-0106 | 1.803 |
| 55 | 10-016-0224-0107 | 1.00558 |
| 56 | 10-016-0224-0108 | 0.01484 |
| 57 | 10-016-0224-0109 | 0.1421 |
| 58 | 10-016-0224-0127 | 2.79492 |
| 59 | 10-016-0224-0111 | 0.03435 |
| 60 | 10-016-0224-0112 | 0.206 |
| 61 | 10-016-0224-0115 | 0.09235 |
| 62 | 10-016-0225-0008 | 0.4363 |
| 63 | 10-016-0225-0010 | 1.1583 |
| 64 | 10-016-0226-0073 | 10.3475 |
| 65 | 10-016-0226-0051 | 0.4347 |
| 66 | 10-016-0503-0004 | 0.24088 |
| 67 | 10-016-0503-0006 | 0.09418 |
| 68 | 10-016-0503-0008 | 0.19157 |
| 69 | 10-016-0503-0011 | 0.04529 |
| 70 | 10-016-0504-0005 | 0.08704 |
| 71 | 10-016-0586-0005 | 0.32734 |
| 72 | 10-016-0587-0003 | 0.31952 |
| 73 | 10-016-0588-0001 | 0.27982 |
| 74 | 10-016-0589-0001 | 0.7396 |
| 75 | 10-016-0589-0003 | 0.35006 |
| 76 | 10-016-0590-0001 | 0.86816 |
| 77 | 10-016-0591-0001 | 0.30576 |
| 78 | 10-016-0594-0001 | 0.33243 |
| 79 | 10-016-0599-0002 | 0.78569 |
| 80 | 10-016-0601-0001 | 0.72833 |
| 81 | 10-016-0699-0001 | 0.23788 |
| 82 | 10-016-0701-0005 | 0.08163 |
| 83 | 10-016-0701-0006 | 0.21466 |
| 84 | 10-016-0701-0008 | 0.18647 |

| | | |
|---|---|---|
| 85 | 10-016-0204-0198 | 0.3849 |
| 86 | 10-016-0224-0131 | 0.0543 |
| 87 | 10-016-0204-0200 | 0.2369 |
| 88 | 10-016-0204-0197 | 0.032 |
| 89 | 10-016-0224-0133 | 0.067 |
| 90 | 10-016-0226-0011 | 0.01796 |
| 91 | 10-016-0276-0006 | 16.3 |
| | Ընդամենը | **319.80932** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2016թ. N 66-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2 կետի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 401.243 հա ընդհանուր մակերեսով արդյունաբերական նպատակային նշանակությամբ հողամասի կառուցապատման իրավունքը մրցույթով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը: Մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի հողակտորների ցանկը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի մեկնարկային գինը սահմանել 167 000 (հարյուր վաթսունյոթ հազար) դրամ՝ 1 հեկտարի համար, ժամկետը՝ 2034 թվականի հունվարի 1-ը, նպատակը՝ արդյունաբերական օբյեկտներ կառուցելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | [signature] | | |
| Բաբաջանյան Սամսոնար Խաչատուրի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կարլենի | [signature] | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-....0.... ձեռնպահ- ...0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 նոյեմբերի 10
Ջերմուկ